

## Արձանագրություն թիվ 8

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,  
կայացած 2022թ հունիսի 8-ին

### Օրակարգում

1. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2021-22 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
  1. Ընթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Ս.Վ.Ղոչիկյան-Ներկայացնում այսօրվա օրակարգը: Բոլորը ծանոթ եք օրակարգին, եթե առաջարկություններ չկան անցնեք օրակարգի առաջին հարցին:

#### 1. Նիստի նախագահ, պրոֆեսոր – Ս.Վ.Ղոչիկյան

Ըստ օրակարգի պետք է լսենք օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն.Ա.Դուրգարյանի հաշվետվությունը 2021/2022 ուս տարում կատարած աշխատանքների վերաբերյալ

Պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան – Օրգանական քիմիայի ամբիոնը սպասարկում է քիմիայի ֆակուլտետի «Քիմիա», «Սննդի անվտանգություն» բաժիններին, Ֆարմացիայի ինստիտուտի բակալավրիատի բաժնին և կենսաբանության ֆակուլտետին: Ամբիոնում կատարվել են 10 ավարտական և 6 մագիստրոսական աշխատանքներ: Աշխատանքների կատարման որակը և ուսանողների պատրաստվածության աստիճանը արտացոլվում է բարձր գնահատականներով: Ներկա դրությամբ միայն երկու մագիստրոսական թեզ չի պաշտպանվել՝ Ֆարմացիայի ինստիտուտից: Պաշտպանությունը տեղի է ունենալու այս ամսվա 10-ին: Մագիստրոսները պատրաստ են և ամբիոնում կատարվել է նախնական պաշտպանությունը: Լաբորատոր աշխատանքների մասով: փորձերը թարմացվում են ըստ ծրագրի: Քիմիա և Սննդի անվտանգություն բաժնի ուսանողները աշխատանքները կատարում են զույգերով, սակայն ֆարմացիայի և կենսաբանության ֆակուլտետի ուսանողների հետ աշխատանքները կատարվում են խմբերով: Հաշվետու տարում ամբիոնում հրատարակվել է 15 հոդված, որոնցից 10 բարձր իմպակտ ֆակտորներով ամսագրերում, 5 –ը տեղական ամսագրերում, 3 ՀՀ արտոնագիր: Այս տարի ամբիոնի հայցորդ՝ Միրաբյան

Նաղարշը պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Ամբիոնում այս պահին կատարվում է թեմատիկ ֆինանսավորմամբ 4 գիտահետազոտական աշխատանք

Ելույթ ունեցողին հարցեր ուղղեցին՝

Ռ.Պ. Մխիթարյան – Դուք ամբողջությամբ եք փոխել լաբորատոր դասերի փորձերի շարքը:

Ն.Ա.Դուրգարյան – Մենք թարմացրել և ավելացրել ենք փորձերի շարքը պահպանելով դասական փորձերը՝ այն է յուրաքանչյուր դասի որակական ռեակցիաները, հայտնաբերման մեթոդները: Լաբորատոր աշխատանքների հիմքը կայանում է նրանում, որ ուսանողը անգամ բակալավրիատը ավարտելուց հետո ունենա բարձր փորձարարական հմտություններ և կարողանա աշխատի լաբորատորիայում:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատեց և դրական գնահատեց Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ:

2. Նիստի նախագահ, պրոֆեսոր – Տ.Վ.Ղոչիկյան

Այժմ լսենք ՈւԳԸ նախագահի Արտյում Պետրոսյանի հաղորդումը 2021/2022 ուս. տարում կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՈւԳԸ-նախագահը նշեց, որ կազմակերպվել են մի շարք գիտաճանաչողական միջոցառումներ, սեմինարներ (Հաշվետվությունը կցվում է):

Ա.Պետրոսյանին հարցեր ուղղեցին

1. Ն.Ա.Դուրգարյան - ՈւԳԸ անդամակցության համար ինչ է հարկավոր, և արդյոք բոլոր ուսանողները կարող են անդամագրվեն:

Ա.Պետրոսյան- ՈւԳԸ-ի անդամ դառնալու համար պետք է լրացնել ձևաթուղթ, սակայն բոլոր աշխատանքները, որոնք գիտական արժեք են ներկայացնում կարող են ներկայացվել ՈւԳԸ կոնֆերանսի ժամանակ: Աշխատանքները մինչև կոնֆերանսին ներկայացնելը՝ տրվում են գրախոսման: Կոնֆերանսը սովորաբար տեղի է ունենում հոկտեմբերին, իսկ հայտագրումը կատարվում է հունիսից-հուլիս ամիսներին:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատեց ՈւԳԸ նախագահի Արտյում Պետրոսյանի հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ:

3. Տ.Վ.Ղոչիկյան- ընթացիկ հարցերից 1, Հարգելի գործընկերներ անայլուիկ և անօրգանական քիմիայի ամբիոնում ,կոլոիդների և ֆիզիկական քիմիայի ամբիոններում

ունենք հետազոտական բաղադրիչ մասով առարկաներ: Ի՞նչ վիճակում են գտնվում այս աշխատանքները:

Ա.Ի.Սարտիրյան – աշխատանքները ավարտված են և ամբիոնում իրականացվել է այդ աշխատանքների ցուցադրական պաշտպանություն:

Շ.Ա.Սարգսյան- Մեզ մոտ նույնպես կատարվել է ցուցադրական պաշտպանություն:

Տ.Վ.Ղուչիկյան – ուզում եմ հիշեցնել, որ կատարված աշխատանքների վերաբերյալ ամբիոնը պետք է ներկայացնի ամփոփիչ հաշվետվություն:

Ընթացիկ հարցերից հաջորդը վերաբերվում առարկայական մասնագրերին: Շատ առարկաներ համար փոխվել են ժամաքանակներ, պետք է ծրագրերը համաձայնացնել ընս ժամաքանակների և փոխվել է գնահատման կարգը: Տեղեկացնեմ, որ ֆակուլտետների փոխ դեկանները վերապատրաստվել են և հունիսի 10-ին ժամը 12:30, 213 լսարանում, Արմեն Գալստյանը կներկայացնի փոփոխությունները և նոր կարգերը:

Գիտխորհրդի նախագահ

Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր

Տ.Վ.Ղուչիկյան

Գիտխորհրդի քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան